

ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԵՐ ՆԱՍԻՄԻ «ԴԻՎԱՆՈՒՄ»

Ռ. Հ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

Ադրբեջանական ժողովրդի ականավոր զավակ Իմադադդին Նասիմին, որի ծննդյան 600-ամյակը լրացավ այս տարի, իր ժամանակի առաջավոր մտավորականության ներկայացուցիչն ու առաջամարտիկն էր, Մերձավոր Արևելքի դրականության ժողովրդականացած դեմքերից մեկը, մարդասիրական գաղափարների ջատագովը՝ մուսուլման և քրիստոնյա ժողովուրդների, հատկապես հայ ժողովրդի բարեկամության դրոշակակիրը:

Նա ծնվել է Շամախի քաղաքում, քաղաք, որը մեծ դեր է խաղացել ազրբեջանական ժողովրդի աղագային զարթոնքի, պետականության ստեղծման և մշակութային առաջընթացի բնագավառներում: Շուրջ քառորդ դար ապրելով ադրբեջանցիներով ու հայերով բնակեցված իր ծննդավայրում՝ Նասիմին շփվել է դրկից հայերի և նրանց միջոցով ողջ հայ ժողովրդի հետ: Այդ ծանոթությունն ավելի է խորացել ու ընդարձակվել, երբ նա շրջել է Անաառլիայում և այլուր:

Նասիմին ինքնատիպ բանաստեղծ է. մեծապես օգտվելով ժողովրդական բառ ու բանից, նա առաջինն էր, որ ադրբեջաներեն լեզուն բարձրացրեց գրական-բանաստեղծական մակարդակի և ուղի հարթեց այդ լեզվով հետագա ստեղծագործողների համար:

Նասիմին մեծ ճաշակով օգտվել է արևելքի դասական լեզվի՝ պարսկերենի հարստությունից և, ի տարբերություն իր մեծանուն նախորդների՝ Նիզամու և ուրիշների, ստեղծագործել է մայրենի՝ ադրբեջաներեն լեզվով: Իրավացի է գրականագետ Համիդ Արասլին, որ պնդում է, թե Նասիմիի «ստեղծագործությունները լեզվաբանական քննության համար շատ արժեքավոր նյութ են պարունակում»¹:

Նասիմիի լեզուն իր հիմքով ժողովրդական է: Հենց այդ ժողովրդական հիմքի շնորհիվ է, որ նրա ստեղծագործություններում տեղ են գտել մի շարք հայերեն բառեր. սրանց մի մասը ժամանակի ընթացքում հնացել է և հանվել գործածությունից, իսկ մյուս մասը հաստատուն տեղ է գրավել ադրբեջաներենում և դարձել նրա անկապտելի հարստությունը: Նասիմիի բանաստեղծություններում օգտագործված հայերեն բառերից ստորև բերում ենք միայն մի քանիսը, որոնք բնորոշ են հայ-ադրբեջանական լեզվական կապերի համար:

AFY-աղու

Лә' лун ким јад едәрсә нуш олур ағу ана.

Кәрчи ағудур фәрагун шәрбәти ашигләрә,

Ејләмәз вәслун шәрабын ичәнә ол ағу кар².

¹ Է. А р а с л ы, Имадэддин Нәсими, Баку, 1972, сәһ. 55.

² „Нәсими „Диваны“нын лексикасы“, Баку, 1970, сәһ. 44. Այսուհետև հանդիպող բոլոր մեջբերումները սույն աղբյուրից են, նշվելու է միայն էջը՝ փակագծերում:

(Իր աղամանդը ով հիշում է, քաղցր է լինում նրան աղուն,
Քանզի աղու է բաժանություն օշարակը սիրահարներին.
Ով որ խմի միանալու դինին, նրան չի ազդի աղուն):

Այս բառը ժամանակակից ադրբեջաներենում գործ էածվում երկու ձևով՝
ағы և ағу. առաջինը ներկայացնում է աղի— 1. աղաշատ, շոռ, 2. դառն, դառ-
նաղի, 3. աղիողորմ, աղեկտուր, իսկ մյուսը՝ աղու— 1. թույն, 2. լեղի՝ դառնա-
համ, 3. վշտալի, տխրալից, 4. նենգամիտ, կեղծավոր նշանակություններով
զարգացած բառաձևերը:

Ադրբեջանական գրականության մեջ ավելի հաճախակի գործածություն
ունի ағы ձևը. օրինակ՝

—Шәрабын юх, кәтир ағы (Нәбати).

(Քաղցու շունես, բեր աղու):

—Фәләк шәрбәтим ејләди ағы (Ашыг Кәрим).

(Աստված, օշարակս դարձրիր աղու):

—Һәмдәмсиз бал јесә, она ағыдыр (Вагиф).

(Առանց մտերմի ով մեղր ուտի, նրա համար աղու է):

Համեմատաբար սակավադեպ է ағу ձևը:

—Јар ол ағуји ичилмәз (Нәсими).

(Սիրածը այն աղուն չի խմեցնի):

—Ичдим... бир ағу кими (С. Азим).

(Խմեցի... ոնց որ աղու):

Աղի — ағы ձևական տարբերությունն այն է, որ հյ. ի-ն շրջվել է ադրբե-
ջաներեն ы ծանր ձայնավորի՝ նախավանկի а ձայնավորի և ғ բաղաձայնի
հաջանգի (ներդաշնակության) օրենքով:

Ադրբեջաներենը այս ағы «1. թույն, 2. աղիողորմ» բառարմատով կազ-
մել է մի շարք ածանցավոր բառեր ու ոճեր. օրինակ՝

Ағыламаг (ағуламаг) «թունավորել»

Ағыланмаг (ағулашмаг) «թունավորվել»

Ағычы «լացող՝ ողբացող, լացացնող՝ ողբասաց կին»

Ағылы (ағулу) «թունավոր»

Ағы вермәк «թունավորել»

Ағы демәк (охумаг || чәкмәк || тутмаг) «սգալ, ողբալ»

Ағыја душмәк «մի բան ուտել-թունավորվել»

Ағыја салмаг «1. թունավորել, 2. լացացնել՝ սգալ տալ».

—Гоча арвадлар... ағы охумаг истәдиләр (Ғ. Мөһди).

—Ағычынын көзәл сәси вә нискилли ағысы адамы мутәәсир
едирди (Чәмәнзәминли).

—Ағзым о гәдәр ағыдыр ки, елә бил ағы јемишәм.

Գրական լեզվից բացի, բառս գործածական է նաև մի շարք բարբառներում
ու խոսվածքներում, ինչպես՝ Ղազախի, Մինգեչաուրի և այլն: Հայերեն ձևերի՝
աղի և աղու, արմատն է աղ, որ հնդեւրոպական ծագում ունի: Աղ-ը բարդ և
ածանցավոր ձևերով ծավալված բառարմատներից մեկն է. բավական ընդար-

ծակ է նաև նրա նշանակությունը. հայոց համար այն ծառայել է որպես նշան բարեկամության (հմմտ. աղ առնել «բարեկամանալ», աղուհաց ուտել «սեղանի շուրջ մտերմանալ»), բաղցրության, փափկության, սիրունության, ապա՝ ապականության (օրինակ՝ աղտեղել, փշացնել), անհամության, ինչպես նաև՝ ոչխարների աղ լիզելու մակաղատելի և այլն:

Այս բառարմատը զարգացել է նաև ծ, տ ածականներով՝ և ավելի ընդարձակվել (աղծ, աղտ, որոնցով կազմվել են աղծեալ «աղ դրած», աղտաղտուկ «աղի, լեղի» և այլ բառեր)³:

Гут(лу) — գութ(ոտ)

Башума гутлу ајағым кәлди басды ол никар,
Көлкәси душди бана сәрви-хураманун јенә (392).

(Գլխիս գթոտ ոտքդ եկավ-դիպավ, ով գեղուհի,
Նոճի-կիպարիսի ստվերդ դարձյալ վրաս ընկավ):

Ժամանակակից աղբբջաններնում, ինչպես դրական լեզվում, այնպես էլ բարբառներում այս բառը գործածական չէ. բառարաններում այն զետեղվում է որպես հնացած բառ⁴:

Բառիս ժխտականը՝ անգութ, գտնում ենք աղբբջանական գրականության հնագույն կոթողի մեջ՝ «Քրիթարի Պաղա Գորգուղում»:

—Гыз ајдыр:— Гәдәми гутсуз кәлин дејинчә удсуз кәлин де-синләр,

(Աղջիկն ասաց.— Ոտքիս մոտքը անգութ (անբարեհամբույր) հարս ասելու փոխարեն, թող անամոթ հարս ասեն):

Երկու բառերի՝ гутлу և гутсуз, արմատն էլ гут -ն է, որ ներկայացնում է հայերեն գութ՝ «1. կարեկցություն, 2. սեր, գորով, 3. աղաչանք» նշանակություններով զարգացած բառարմատը: Սա հին հայերենից ավանդված, բարդ և ածանցավոր ձևերով ծավալված (հմմտ. գորովագութ, գթասիրտ, գթառատ, գթալ, գթություն, գթալի, գթոտ, անգութ և այլն) և բարբառներում տարածված բառ է:

Тәкфур-թագավոր

Мулки—Иран, мулки—Туран, мулки—Һинду,

Мулки—Шамәм, мулки—Гејсәр. Румијјәм тәкфуријјәм (176)⁵.

(Տերության Իրանի, տերության Թուրանի, տերության Հնդկաց, Տերության Համամի, տերության Կեսարիո, Բյուզանդիո թագավորն եմ):

³ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, 1972, էջ 115:

⁴ «Нәсими „Диваны“нын лексикасы» գրքում էջ 18, այս բառը բացատրվում է .Му. барәк, уғурлу, хејирли, хошбәхт» և նշվում, որ հնացած է:

⁵ «Нәсими „Диваны“нын лексикасы» գրքի կազմող Զ. Գաբրամանովը այս բառը ծանոթագրում է այսպես. Тәкфур (ավելի ճիշտ՝ тәкфур, որովհետև и-ն արմատական հնչյուն չէ—Բ. Բ.) Тәкфура мәнсуб олан, тәкфур һакимләриндән, тәкфур ханәданындан олан (су сүз вахтилә Анатолу вә Рум елиндә һәм сурмуш валиләрә верилән аддыр, соирадан һаким, амир мәналарында ишләнмишдир (176). որն այնքան էլ ստույգ չէ, քանի որ միջնագրում այս տիտղոսով էին կոչում Կիլիկիայի և այլ տեղերի հայոց թագավորներին ու իշխաններին ոչ միայն օգոսդները, այլև հայոց հարեան արեազները (А. Ализаде, Социально-экономическая и политическая история Азербайджана XIII—XIV вв., Баку, 1960, стр. 51), արաբները (Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, թագ բառարմատի տակ), թուրք-օսմանները, ասորիները և այլն:

Ինչպես նախորդ բառը, այնպես էլ սա գրական աղբրեջաններենում և բարբառներում անգործածական է, բայց XIII—XV դդ. սովորական գործածության բառ էր. այդ է հաստատում վերը հիշատակված «Քրիթարի Դադա Գորգուդ» կամ «Յուզնամա» կողմող դաստանների ժողովածուն, որտեղ թագավոր ԹԱԿՍՐ բառը գործածված է վաթսույնյոթ անգամ՝ դարձյալ նույն «Թագավոր, արքա, իշխան» նշանակությամբ և բոլոր դեպքերում միևնույն ԹԱԿՍՐ⁶ ձևով:

Սրանց՝ ԹԱԿՍՐ և ԹԱԿՓՍՐ ձևական տարբերությունը աղբրեջաններենով չի բացատրվում, այլ՝ հայ ժողովրդական բարբառներով, որոնցից փոխառյալ են (հմմտ. թաքուր || թաքոր, թաքվուր || թաքֆուր և այլն. եռավանկ բառերի միջին վանկի ձայնավորի սղման կանոնով ստացված ձևերից մեկում >վ թաղաձայնը կից շնչեղ խուլ բաղաձայնի առնմանությամբ շրջվել է իր խուլ տեսակին՝ ֆ, որով՝ թագաւոր> թագվոր> թաքֆուր — ԹԱԿՓՍՐ, իսկ մյուսում սղվող ա ձայնավորի հետ ընկել է վ-ն ԹԱԿ ՍՐ):

Давар-տավար

Әнбијанын сиррини билмәз давар,
Гисмәт олмаз дивә раһи-хошкувар (234).

(Մարգարեների գաղտնիքը չի իմանա տավարը,

Հասույթ չի լինի դեին՝ ուղին դուրանց):

Սա ժամանակակից գրական աղբրեջանների սովորական գործածության բառերից է՝ «անասուն» մանր եղջերավոր, այծ, ոչխար» նշանակությամբ. բացառությամբ մալդավար «անասուն» բառի, այս բառարմատով կազմված բարդ և ածանցավոր բառաձևեր չկան: Դուբայի աղբրեջաններեն բարբառում բառս տավար ձևով է, որ ստացել է «ջահել գոմեջ» նշանակություներ — Тавар утларда утду»рду («Գոմշուկը արածում է արոտում»):

Այս բառի հին հայերեն ձևն էր տաւար 1. արջառ, 2. ընտանի շորքոտանի, 3. հիմար, գոհհիկ»՝ որ ժողովրդական բարբառներում ստացել է դավար || տավար և այլ ձևեր. սա «հայերենից անցել է ալթայական լեզուներին, որոնցից՝ սլավոնական լեզուներին, վերջիններից՝ ուկրո-ֆիննական լեզուներին»⁷:

⁶ «Китаби Дәдә Горғуд», Баку, 1962, сәһ. 135.

⁷ Հ. Բ. Աճառյան, Նշվ. աշխ., հ. 2, էջ 965—967.

АРМЯНСКИЕ СЛОВА В «ДИВАНЕ» НАСИМИ

Р. А. БАГРАМЯН

Доктор филологических наук

Резюме

Имададдин Насими один из передовых мыслителей своего времени. Он родился и четверть века жил в Шемахе, где и общался с местным населением, полюбил их, посвятил им стихи и имел много поклонников среди армян.

Язык творчества Насими любопытен: он первый из азербайджанских писателей творил на родном языке, разговорную речь поднял на уровень поэтического.

В своей основе язык поэта — народный — разговорный. Благодаря этому в его стихи вошли армянские слова, а именно: ағу «отрава, яд» — աղու, гут (лу), «жалостливый» — գութ (ոտ), давар, «скотина, скот» — տավար, ԹԱԿՓՍՐ «король, царь» — թագավոր.